

- 121 Զայնու պահու Յակոբ Նալեան
 Հիւանդացեալ ախտիւ մահուան
 Նրստէր ի սակս օգոյ փոխման,
 ՅԸսկիւտարու վանս Սաղիմեան:
- 122 Ուր եւ Սարգիս բատէպ երթայր
 Առ բափօփել զԵղբայրն անկար,
 Որում եւ իսկ սիրելաբար
 Հանդերձեալն խոկալ ձայն տայր:
- 123 Զոր ի գ^օտանելն առանձնացեալ,
 Զարարսն ոճիւ ի յուշն ածեալ,
 Համոզակէր յոյժ խրղճացեալ,
 Զի գէթ մեռցի սերտ զղջացեալ:
- 124 Որ եւ անդէն ի մէջ բերէր
 Մատեանս նորին՝ զոր տրպեալն էր
 Ընդգէմ ուղղոց որ արժան չէր,
 Ընդ որս ինքն իսկ գաղտ անհաճ էր:
- 125 Որպէս յայտ է անձանց սմանց
 Թէ նա զայս բանս ոչ շարադրեաց
 Ընդգէմ բանից ուղղափառաց
 Բայց թէ հաճիլ Հայոց բաղմաց:
- 126 Առ այս Յակոբ տայր պատասխան,
 Թէ տպեալ եմ արգ մի մատեան,
 Ժամամբտից լ' աղօթից բան,
 Յոր ուղղափառ բազում բանք կան:
- 127 Որում Սարգիս կրկնէր անդէն,
 Թէ կամքդ յայնմիկ նոյնպէս պարզ չեն,
 Որպէս ի միւս գրեանսդ յայտ են,
 Յորս անպատեհք յոգնաթիւ են: